ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2016թ. նոյեմբերի 29 N 148-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով , Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի առաջարկությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Թալինի տարածաշրջանի 3-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) <<Արագածավանի թիվ 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմում <<Վահրամ Պապիկյան>>, <<Անդրանիկ Խաչատրյան>> և <<Արմեն Ամիրխանյան>> բառերը փոխարինել համապատասխանաբար <<Խաչիկ Գյոզալյան>>, <<Սարգիս Թադևոսյան>> և <<Սիրամարգ Ղուկասյան>> բառերով:

Գ. ԳՅՈՋԱԼՅԱՆ